

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԹԵՔԵՅԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ
ԱՌԻԹՈՎ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ
ԱՆԴԱՄՍ ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ**

Թեքեան Մշակութային Միութեան հիմնադրման վաթսուներորդ տարեդարձի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Միութեան բոլոր անդամներին:

Թեքեան Մշակութային Միութեան գործունէութիւնն առատ է բարի արդիւնքներով եւ իրապէս արժանի դրուատանքի: Հիմնադրուելով Բէյրութում, այսօր Միութիւնը մասնաճիւղեր ունի Սփիւռքի գրեթէ բոլոր համայնքներում՝ իր շուրջ միաւորելով նախանձախնդիր եւ ծառայանուէր հայորդիների: Վեց տասնամեակ շարունակ Թեքեան Մշակութային Միութիւնը բազմաբնոյթ գործունէութեամբ ու ազգանպաստ գովարժան ծառայութեամբ աշխոյժով է լցնում հայ համայնքների կեանքը եւ բարեպաշտ հայորդիների հոգիներում զօրեղ պահում ազգային գիտակցութիւնը, հայրենասիրութիւնն ու եկեղեցասիրութիւնը, կապուածութիւնը մեր մշակոյթին, հայրենական արժեքներին:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում նաեւ Հայրենիքում Թեքեան Մշակութային Միութեան գործունէութեանը: Հայրենի մեր Երկրում անկախութեան վերականգնման առաջին տարիներից Միութիւնը կարեւոր մասնակցութիւն է բերում Հայաստանի կրթական եւ մշակութային կեանքի վերագարթօնքին՝ բարի արդիւնքներ մատուցելով հայրենաբնակ մեր ժողովրդին:

Սիրելի անդամներ Թեքեան Մշակութային Միութեան,

Վաթսունամեայ յոբելեանի առիթով բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր բարձր գնահատանքը: Մեր յորդորն է, որ մշտապէս հաստատուն մնաք առ Հայրենին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին Ձեր սիրոյ մէջ եւ անսպառ եռանդով Ձեր կարելին ի սպաս դնէք Հայրենիքի պետականաշինութեան եւ զօրացման նուիրական գործին:

Առ Աստուած աղօթքով հայցում ենք, որ Բարձրեալ Տէրը միշտ շէն ու պայծառ պահի Թեքեան Մշակութային Միութիւնը եւ գործոց յաջողութիւններն ու ամենայն բարիք պարգեւի նրա բոլոր նուիրեալների բարի գործերի եւ ձեռնարկումների իրականացման ճանապարհին:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 24-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 783